

## Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻԾԱՆԸ ՈՐՊԷՍ «ԲԱԶՄԱՎԷՊ»Ի ԽՄԲԱԳԻՐ

Հայաշխարհը 2020 թ. ոգեկոչեց երկու կարեւոր յոբելեան: Հայագիտութեան եւ հայապահպանութեան երկու հսկաների՝ Ղեւոնդ Ալիշանի եւ Մկրտիչ Ա խրիմեանի ծննդեան երկու հարիւրամեակները:

Հայոց արգանդից ծնուած սոյն երկու մեծագոյն անհատականութիւնների համակ կեանքը, անձնուիրումի եւ անձնագոհութեան վիթխարի ջանքերը, մեծ ու մշտական պայքարի ոգիսականը վկայում են, որ նրանք ասպարէզ էին ելել մեր ժողովրդի համար խիստ ճակատագրական պահին: Իրաւ, միանգամայն ճշմարտացի է այն դիտարկումը, որ «Եթէ համայն հայութեան մէջ անխտիր բոլոր խաւերում անկէտայի ենթարկուէր, թէ ո՞վ է ԺԹ. դարու ամենախոշոր, ամենահեղինակաւոր, ամենասիրելի, պաշտելի մարդը, որի խօսքը, կամքը, տենչամքը ու մտորումը համայն հայութեան բաղձաձի ամփոփումը իր սրտում-հոգում ամբարած լինէր, անշուշտ, միանգամայն երկու մարդի վրայ կանգ կառնէին՝ Խրիմեան Հայրիկ եւ Հայր Ղեւոնդ Ալիշան:

Խրիմեան Հայրիկ եւ Հայր Ղեւոնդ Ալիշան՝ մի-մի պայծառ, կենսարար, բուժիչ ու սննդարար ցառագայթներ եղած են, համայն հայութեան սիրտ-հոգի-միտք-զգացում դաստիարակող, կող կոփողներ: Գրագէտը կարդացել է սրանց հրաբորբոք երկերը, անգրագէտը լսել է աշուղի տաղերը, Խրիմեան Հայրիկին եւ Հայր Ղեւոնդ Ալիշանին ձօնուած, եւ հաւատում-պաշտում է նրանց իբրեւ իր հայրենիքի ցառախախմամութիւն»<sup>1</sup>:

Այսօր եւ այս պահին խօսենք միայն Ղեւոնդ Ալիշանի ունեցած դերակատարութեան մասին: Արտասովոր շուայլ ընդունակութիւնների եւ զարմանալի ճակատագրի տէր սոյն անհատին վիճա-

1 Ալիշանը ժամանակակիցների յուշերում, Ե., 1974, 163:

կուած էր բացառիկօրէն առանձնայատուկ ու վճռական դեր ստանձնելու հայոց պատմութեան մի բախտորոշ դարաշրջանում, որպիսին ժԹ. հարիւրամեակն էր, երբ արդէն գծագրուում էր հայ ժողովրդի լինել թէ՞ չլինելու ահեղ հարցականը:

Ուրեմն այդ տագնապալից եւ օրհասական ժամանակաշրջանը պիտի ծնէր հէնց Ալիշանի նման անհատականութիւններ, որոնք մեր ժողովրդի գոյապայքարին մասնակից պիտի լինէին գրով եւ գրչով, ուսումնականութեամբ եւ գիտութեամբ եւ իրենց ժողովրդի լինելիութեան դատը պիտի պաշտպանած լինէին վերոնշեալ գործիքներով ու մեթոդներով:

Այո, Ղեւոնդ Ալիշանը եւս, ինչպէս մեր ժողովրդի ծոցից դուրս եկած միւս մեծ մտաւորականները, քաջ գիտակցում եւ պատկերացնում էր, որ ժողովուրդները մրցակցում ու մարտնչում են ոչ միայն սրով ու Ֆիզիկապէս, այլեւ գրով ու գրչով, եւ երբեմն առաւել շատ գրով, գրչով ու գիտութեամբ, քան զուտ Ֆիզիկական չափումներով:

Հայ ժողովրդի բազմադարեան պատմութեան մէջ գրի, գրականութեան եւ գիտութեան դերի յստակ կարեւորումով եւ իմաստաւորումով է Ղեւոնդ Ալիշան գործիչն ու գիտնականը մօտենում իր գործին եւ հայոց լինելիութեան խորհրդին:

Նրա խորին համոզումով եւս, բազմաշարչար հայ ժողովուրդը իր ճանապարհին եղած բոլոր ծանրագոյն խոչընդոտներն ու մարտահրաւէրները կարողացել է յաղթահարել եւ առաջ շարժուել շնորհիւ իր հինաւուրց գրի եւ գրականութեան, դպրութեան եւ գիտութեան:

Ահա թէ ինչու առաջադէմ եւ ուսեալ հայ գործիչները ամէնուրեք առանձնայատուկ հոգատարութեան ներքոյ են պահել հայ գիտական եւ կրթական օջախները եւ մամուլի օրգանները:

Նոր ժամանակներում ակնյայտօրէն ու միանգամից կարեւորուեց յատկապէս մամուլի դերը որպէս ազգային ինքնութեան պահպանման, տարբեր ազգերի ու միջազգային հանրութեան հետ յարաբերուելու հզօր միջոցի: Հայ ժողովրդի պատմական դժնի ճակատագրի ելեւէջները դրոշմուած են նաեւ հայ պարբերական մամուլի սկզբնաւորման ու ընթացքի, բնոյթի եւ բովանդակութեան վրայ: Հայ ժողովրդի քաղաքական դժնի ճակատագիրը, երկրի բռնի բաժանումը տարբեր հատուածների, գաղթօջախների առաջացումը տարաբնոյթ պայմաններ են ստեղծել հայութեան գրական, մշակութային եւ հոգեւոր-բարոյական արժէքների ստեղծման

համար: Այդ առումով եւ այդ կտրուածքով քննելիս բոլորովին էլ զարմանալի է, որ հայ անդրանիկ պարբերականը՝ «Ազդարար»ը եւ առաջին շարքում նաեւ «Բազմավէպ»ը հիմնադրուել են Հայաստանի եւ հայկական լեռնաշխարհի սահմաններէից դուրս:

Հայ մամուլի պատմութեան անդաստանում յատկապէս կարեւորում եւ արժեւորում են Մխիթարեան միաբանութեան ջանքերն ու ներդրումը:

Յարատեւ ժամանակ է, որ Մխիթարեանները բարձր են պահում հայ մամուլի անունն ու պատիւը: Նրանք մէկը միւսի հետեւից, առանց ընդհատումների, հրապարակեցին աշխատութիւններ եւ պարբերականներ, որոնք կոչուած էին նոր մթնոլորտ եւ նոր իրավիճակ ստեղծելու հայ գիտական մտքի եւ պարբերական մամուլի անդաստանում:

Մխիթարեան միաբանութեան կողմից հրատարակուած առաջին պարբերականներն էին «Տարեգրութիւն»ը, «Եղանակ Բիւզանդեան»ը, որոնց խմբագրում էր Ղուկաս Ինճիճեանը: Միաբանութեան երրորդ պարբերականը «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթն էր:

Յաջորդ պարբերականը 1843 թուականին լոյս տեսած «Բազմավէպ»ն է, որն ինքնին նշանաւոր է հէնց նրանով, որ շարունակում է հրատարակուել մինչեւ օրս:

Այն հանդէս եկաւ որպէս «Օրագիր քնակաւ, տնտեսակաւ եւ բանասիրակաւ գիտելեաց»: Իսկ «Բազմավէպ» անունը յուշում էր, որ այն բազում բաներ վիպող է ու բազմապիսի բաներ պատմող: Նրա առաջին խմբագիրը եղաւ բազմափորձ եւ բանիմաց Գաբրիէլ Ալվազովսկին: Իսկ խմբագրական խորհրդի անդամներն էին Ղեւոնդ Ալիշանը եւ Յովհաննէս Սորկուճեանը:

«Բազմավէպ» հանդէսում յաճախակի էին փոխում խմբագիրները: Բաւական է նշել, որ 1843-ից մինչեւ 1880 թուականը այն ունեցել է տասներկու խմբագիր: «Բազմավէպ»ը ասպարէզ ելաւ նախ եւ առաջ իր ժամանակի թելադրանքով: Այն լեզուական առումով դիւրին եւ հաճելի հարթակ էր բացում հայ իրականութեան եւ աշխարհի իրականութեան զանազան եւ բազմաբնոյթ խնդիրները, հարցերն ու հարցականները քննելու եւ այդ ամէնը հայախօս հանրութեանը ներկայացնելու համար:

Իսկ ԺԹ. դարի կէսերը մի ցնցող ու արժէքային առումով յարափոփոխ ժամանակաշրջան էր հին աշխարհամասի ժողովուրդների կեանքում: Հայ իրականութիւնը, այդ իրականութեան եւ

միջավայրի մէջ ապրող հայ մարդն ու քաղաքացին չէին կարող երկար ժամանակով կտրուած մնալ աշխարհում ընթացող քաղաքական, հոգեւոր-բարոյական, տնտեսական, մշակութային գործընթացներին:

Այդ գործում հայ հասարակութեանը օգնում եւ զօրավիզ էին «Բազմավեպ»ը եւ Մխիթարեան միաբանութեան հայրերի հրատարակած միւս արժէքաւոր գործերը:

«Բազմավեպ»ի խմբագիրներն ու գլխաւոր աշխատակիցները եղել են ժամանակի ամենաուսեսալ, կիրթ ու առաջադէմ անհատները ոչ միայն հայկական իրականութեան, այլեւ եւրոպական եւ համաշխարհային չափանիշներով: Նրանք քաջ գիտակցում եւ պատկերացնում էին խնդիրների եւ հիմնահարցերի այն ամբողջ հրամայականը, որ ծառայած էր հայ ժողովրդի եւ հայ սերունդների առջեւ:

Ղեւոնդ Ալիշանը մէկը եւ առաւել նուիրուածը եղաւ Մխիթարեան միաբանութեան գործիչներին, ովքեր կանգնած էին «Բազմավեպ»ի հիմնադրութեան ակունքներում եւ գիտակցական ողջ կեանքի ընթացքում հաւատարիմ մնացին նրան: Որպէս խմբագիր Ալիշանը «Բազմավեպ»ում պաշտօնավարել է կարճ՝ 1849-1851 թուականներին, սակայն նա իր ստեղծագործական գործունէութեան ողջ ընթացքում կապուած էր հանդէսի հետ եւ նրա երկերը շատ յաճախ էին տպագրուում այնտեղ: Ղ. Ալիշանը միշտ եղել է միաբանութեան այն այրերի շարքում, ովքեր անընդմէջ լինելով պարբերականի կողքին, մշակել եւ իրականացրել են «Բազմավեպ»ի լեզուական, գիտական ու մշակութային ուղղուածութիւնը:

Ժամանակի հրատապ պահանջն էր դարձել պարբերական մամուլի միջոցով կրթել, դաստիարակել, լուսաւորել: «Բազմավեպ»ը եղաւ վերոնշեալ գործառույթն իրականացնողը եւ նրա ջրհորում Ալիշանը «...սկսեց տպագրել մանկավարժական բնոյթի խոր, ինչպէս նաեւ դաստիարակչական հարցերի վերաբերեալ բովանդակալից յօդուածներ, տեղեկութիւններ բնութեան եւ նրա առանձին տարրերի, աստղաբաշխութեան, հայ ժողովրդի պատմութեան, մատենագրութեան, հայ իրաւագիտութեան մասին»<sup>2</sup>:

Չուշանալ, հետ չմնալ աշխարհում ընթացող գիտական, մշակութային, բարոյաքաղաքական գործընթացներին, չմեկուսանալ

2 ՄԱԿՎԵՑԵԱՆ Է. Ս., Ղեւոնդ Ալիշան, «Երիտասարդ գիտատող», ԵՊՀ հրատ., 1970, թիւ 1, 59:

սեփական միջավայրի պատերի ներսում, -ահա այն կարգախօսն ու սկզբունքային մօտեցումը, որն առաջին իսկ տարիներին որդեգրեցին «Բազմավեպ»ի խմբագիրներ Գաբրիէլ Այվազովսկին, Ղեւոնդ Ալիշանն ու Մխիթարեան միաբանութեան միւս նշանաւոր դէմքերը:

Այդ խնդիրները լուծելու համար հանդէսին անհրաժեշտ էր նախեւառաջ առաջնորդուել լեզուական նոր քաղաքականութեամբ: Ահա այդ պատճառով եւ նպատակով է, որ «Բազմավեպ»ը ի տարբերութիւն աւելի վաղ հրատարակուած միաբանութեան պարբերականների, որդեգրեց ոչ թէ «ռամկայառն աշխարհաբարը», այլ ԺԹ. դարի առաջին տասնամեակների արեւմտահայ մտաւորականութեան գործածած լեզուն, որը միայն ու միայն նոր էր սկսուել ձեւաւորուել որպէս գրական լեզու եւ դեռ ճանապարհ ունէր անցնելու:

Թէ Այվազովսկու եւ Ալիշանի պաշտօնավարման օրօք եւ թէ առհասարակ, հանդէսը վարում էր լեզուական ճկուն քաղաքականութիւն, գտնելով, որ որոշ նիւթեր նախընտրելի է հրատարակել գրաբարով (յատկապէս բանաստեղծական քերթուածքները): Լեզուական այսպիսի «երկկենցաղութիւնը» ընկալելի եւ հասկանալի էր ժամանակակիցների կողմից: Այդ ժամանակ՝ հանդէսի հէնց առաջին համարներից սկսած թարգմանական գրականութեան ընտիր էջեր էին ներկայացուում, յատկապէս ԺԹ. դարի Ֆրանսիական գրականութեան հանճար Լամարթինի գործերը, որոնք այնքան էական ազդեցութիւն են գործել ժամանակի եւ յետագայի հայ բանաստեղծական մտքի փայլատակման վրայ:

Ահա այսպէս, քայլ առ քայլ, Այվազովսկու եւ Ղեւոնդ Ալիշանի «Բազմավեպ»ը դաստիարակում եւ կրթում էր հայ ընթերցողների միտքն ու հոգին, գեղագիտական ընտիր ճաշակ զարգացնում: Յիրաւի, այդ ամէնի խտացումն է 1844 թ. հանդէսի առաջաբանում շեշտադրուած հետեւեալ միտքը. «Մարդու մը՝ իր ազգին լուսաւորութեանն ու յառաջադիմութեանը համար աշխատել աւելի գեղեցիկ ու վսեմ ինչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ»<sup>3</sup>: Թէ՛ ԺԹ. դ. կէսերին, երբ հանդէսի խմբագրի պարտականութիւնը ստանձնել էր Ղ. Ալիշանը, թէ՛ յետագայ տասնամեակների «Բազմավեպ»ը հնարաւորինս ամէն ինչով նպաստեց համայն հայութեան ազգային ինքնութեան ամրապնդմանն ու նրա հոգեւոր էութեան հարստացմանը:

3 «Բազմավեպ», Վենետիկ 1844, թիւ 2, 3:

Լինելով լայնախոհ եւ բազմակողմանիօրէն զարգացած մտա-  
ւորական՝ Ալիշանը հիմնօրէն արծարծում էր նաեւ եւրոպական  
թեման իր խմբագրած հանդէսի էջերում՝ սկսած հասարակական-  
քաղաքական իրադարձութիւններից մինչեւ գրական ու մշակու-  
թային ժառանգութեան հարցերը: Իսկ եւրոպական քաղաքակա-  
նութիւնը, եւրոպական իրականութիւնը իր մշակոյթով, գիտու-  
թեամբ, հասարակական եւ քաղաքական զարգացումներով (մաս-  
նաւորապէս իտալական ազգային-ազատագրական շարժումը Գա-  
րիբալդու առաջնորդութեամբ) շատ բան էր հաղորդում եւ ու-  
սուցանում Ալիշանին եւ հանդէսի միւս խմբագիրներին:

Այո, Ղեւնոյդ Ալիշանը նախաձեռնող ու նախանձախնդիր ե-  
ղաւ հայ մամուլ եւ գրական իրականութիւն փոխադրել եւրոպա-  
կան գրական ու մշակութային լաւագոյն արժէքներն ու փորձա-  
ռութիւնը:

Ալիշանը որպէս «Բազմավէպ»ի խմբագիր, իր նախորդը եւ  
յաջորդողները դրեցին հայ պարբերական լրագրութեան կանոնա-  
ւորած հիմքերը: Նրանք ցոյց տուեցին եւ հիմնաւորեցին, թէ ինչ-  
պէս կարելի է ստեղծել հանդէս իր գիտական հիմքերով ու հի-  
մունքներով, սկզբունքային մօտեցումներով ու մեթոդաբանու-  
թեամբ:

Մինչ այդ լոյս տեսած հայկական հանդէսներից եւ ոչ մէկը  
չի ունեցել կուռ մշակած տեսական ու գիտական հիմքեր ու մե-  
թոդաբանութիւն:

Առաջինը «Բազմավէպ»ն էր, որը որոշակի սիստեմահամա-  
կարգութիւն էր ձեւաւորում այդ ամէնում: Ահա այսպէս, բազում  
խնդիրների, հարցերի ու հարցականների համակարգմանը, պար-  
զաբանմանն ու իմաստաւորմանն է ձեռնամուկ եղել «Բազմավէպ»ի  
խմբագիր եւ խմբագրական խորհրդի անդամ Ալիշանը, աշխատա-  
կից եւ հրապարակագիր Ալիշանը, բազմափորձ գիտնական եւ հա-  
սարակական գործիչ Ալիշանը:

Ալիշանի փոխխմբագիր եւ խմբագիր եղած տարիների մա-  
սին անչափ պատկառելի բնութագրութիւն է թողել նրա կենսա-  
գիրքներից՝ Ս. Երեմեանը. «Նա այս պաշտօնակալն թերթը համարած  
էր միաբանութեան երիտասարդ մտքերու մարգարանը, որով ամենէն  
ընդունակ նորընծայ արեղաներու կը պատուիրէր, որ իւրաքանչիւր  
թերթի մէջ անպատճառ մի-մի յօդուած հրատարակէ: Երիտասարդաց  
պաշտմանց մէջ «Բազմավէպ»ի յօդուածագրութիւնը ամենէն առաջին  
պարտաւոր ծառայութիւնն ցկատած էր եւ յայս պատճառով ինքն ևս-

խորհմակ կու տար, կը ջանար իր յողուածները «Բազմավէպ»էն անպակաս ընելու»<sup>4</sup>:

*Հայր Ղեւոնդ Ալիշանը բազմագիտակ ու գիտութիւնների բազում ճիւղերի մէջ խորիմաց ու խորագիտակ լինելուց զատ նախեւառաջ իր բազմատանջ ու բազմաչարչար հայրենիքի հանդէպ շտեմնուած սիրոյ եւ կարօտի պաշարներ ամբարած անհատակա-նութիւն էր:*

*Դա ցայտունօրէն տեսանելի է ոչ միայն գրական քերթուածքներից, այլեւ խմբագրած «Բազմավէպ» հանդէսի խմբագրականներից եւ այլեւայլ նիւթերից: Իր գործերից ընտիր հատուածներ նա օգտագործում էր առաջաբանների համար: Իւրաքանչիւր համար բացում էր «Բարոյական» կարգախօսի առանցքի ներքոյ ընդարձակ բարոյախօսութեամբ, որի նպատակակէտը հայրենիքն էր, հայրենեաց առաքինութիւնների, նրա հոգեւոր-բարոյական սիւնների մշտական ու բարւոքիչ նորոգումը:*

*Ալիշանի խորին համոզումով եւս «Ճշմարիտ հայրենասէր՝ առաքինի մարդն է միայն, այն մարդն որ իր ամէն պարտքերն ալ կը մանչնայ ու կը սիրէ եւ անոնք լաւ կատարելու կ'աշխատի»<sup>5</sup>:*

*Ալիշանական քննադատութեան սլաքն ուղղուած է բոլոր այն բացասական յատկութիւնները կրողներին, յատկապէս նրան. «Ով որ աստուածապաշտութիւնը, վայելչութիւնը, արդարութիւնը ոտքի տակ, ու հայրենիք, հայրենիք կը կանչէ, մի հաւատար անոր: Այնպիսին կեղծաւոր հայրենասէր է, այնպիսին ամենավնասակար քաղաքացի է»<sup>6</sup>: Ալիշանը զուտ որպէս խմբագիր անուրանալի ծառայութիւններ է մատուցել հայ գիտական ու գեղարուեստական մտքի զարգացմանը, հայ լրագրական գործում նոր որակների ձեւաւորմանը:*

*Իր աւելի քան 60-ամեայ գիտական-ստեղծագործական կեանքի ընթացքում Ալիշան-այրը հանդէս է եկել եւ իր հական ներգործութիւնն է թողել հայ մշակոյթի ու գիտութեան տարբեր բնագաւառներում: Նա թողել է գիտական ու գրական վիթխարի ժառանգութիւն եւ իր անունը հայութեան սերունդների շուրթերին հողովուրում է որպէս բարձրարուեստ եւ բազմաչերտ հայրենասէր բանաստեղծ, աննկուն ու խորագիտակ պատմաբան ու աշխարհա-*

4 ԵՐԵՄՅԱՆ Ս., *Կենսագրութիւն Հ. Ալիշանի*, Վեներիկ 1902, 138:

5 «Բազմավէպ», Վեներիկ 1850, թիւ 4, 51:

6 Ա.Ա.:

գէտ, լայն տեսահորիզոնով հայագէտ, գիտական ու գեղարուեստական գործերի հմուտ թարգմանիչ, հրաշալի արձակագիր, հնագէտ, կենսաբան ու բուսաբան, լրագրող ու խմբագիր: Յիրաւի, ճշմարտացի է այն գիտարկումը, որ Ղեւոնդ Ալիշանը իր ստեղծած հսկայական ժառանգութեամբ, գիտական ու գրական գործերով ճանաչուած հեղինակութիւն էր ոչ միայն համահայկական, այլև՝ համաեւրոպական ընդգրկմամբ: Նրա գիտական ու ստեղծագործական աշխատանքները թարգմանուել են ռուսերէն, անգլերէն, իտալերէն, գերմաներէն, իսկ «Ֆրանսիական ակադեմիայի կողմից ստացել է Պատուոյ լեգէոնի շքանշան, եղել է պատուաւոր անդամ: Իտալիայի Ասիական, Պետերբուրգի, Մոսկուայի հնագիտական, Ենայի փիլիսոփայական ընկերութիւնների»<sup>7</sup>:

*Որպէս ամփոփում ասուածի, շեշտադրենք որ Ալիշանը գիտակցական ողջ կեանքում տքնեց ու տառապեց ոչ միայն իր սաների, այլև հոգեւոր ժառանգի՝ «Բագմավէպ»ի առաւել տարածման համար:*

*Եւ «Բագմավէպ»ը այսօր եւս դարաւոր կաղնու նման կանգնած է հայրենի գիտութեան, մշակոյթի եւ լրագրութեան անդաստանում, ինչը եւս խորապէս յաւերժացնում է Ղեւոնդ Ալիշան մեծ հայի յիշատակը:*

ԱՐՄԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

7 ՄԱԿՎԵՑԵԱՆ Է., *Աշխ.*, 55:

### Summary

## FR. GHEVOND ALISHAN EDITOR OF “BAZMAVEP”

ARMEN KARAPETYAN

**KEY WORDS:** *Ghevond Alishan, “Bazmavep” magazine, Mkhitarist Congregation, literary and cultural values, a new linguistic approach, scientific and the oretical bases and methodology*

The great Armenologist, poet, prose writer, historian and geographer Ghevond Alishan was also famous as an editor. He was one of the founders of “Bazmavep” and from 1849 to 1851 he edited that magazine. Throughout his conscious life, Alishan has always been by the side of of the magazine publishing thousands of different materials. As an editor and an employee Alishan had a clear idea of the problems and issues, that Armenian generation has. Together with the members of the editorial board, he developed and implemented the linguistic, scientific and cultural direction and activity of “Bazmavep”.